Ծուշանիկ Կուրղինյան

Նամակ Աղասի Շահինյանին 2

13 նոյեմբերի, 1915 թ .
Ն. Նախիջևան
Սիրելի հոգեբան .

Հույժ ուրախ եմ ազատվելուդ համար: Լավ է որ վերջնականապես հրաժարվեցիր հրապարակային ահ ու դողից ու «անպետք» գտնվեցար հայրենիքիդ համար . . .

Գրում ես, որ սկսել ես կասկածանքով վերաբերվել դեպի բելետրիստիկան ընդհանրապես, այսինքն նրա գրական հասարակական դրդիչ ուժը, ծառայելու ընդունակ լինելուն և առհասարակ չես կարդում ո՛չ պրոզա, ո՛չ էլ քնարական երկ:

Համաձայն չեմ, բելետրիստիկան, ավելի լավ է ասել գեղեցիկ գրականությունն առհասարակ, եղել է և կմնա կարդացող հասարակության համար դրդիչ ուժ, խթան, իսկ այս ուժն ունենալու համար նա լինելու է կյանքին, ժամանակին, ձգտումներին, որոնումներին, ապրումներին մոտ ու մտերիմ, անաչառ թարգման, թե չէ առանց գեղարվեստական, գեղեցիկ կարդացող գրականության մարդու ականջները կթառամեն, հավատա:

Ասում ես, որ Գեղամ Արմենն ինձ և Հ. Հակոբյանին բանաստեղծ անվանելուց հրաժարվեց: Չգիտեմ թե ինչ կասե Հ. Հակոբյանը, ես չեմ համարձակվում նրան պաշտպանելու, այդ կարող է ինքն անել . վասնզի այդ գործով նա վաղուց է որ հայտնի է հրապարակում: Հիշու՞մ ես, «Մշակում» ինքնապաշտպանությամբ

պարապող «Credo»-ին . իսկ ես, որովհետև ինձ շատ եմ սիրում և երբեք չեմ պաշտապնում, իսկ ես կասեմ, որ ո՛չ բանաստեղծուհի եմ, ո՛չ էլ հրապարակախոս, ո՛չ տենդենցիոզ, ո՛չ մենդենցիոզ այլ մի հասարակ, սովորական «просто приятная дама», ճիշտ չե՞մ ասում . պրծավ գնաց. թե ո՞ւր, ո՞ր ճամփով, չգիտեմ . . .

Մանիկիս նկարը ստացա . իհարկե, չճանաչեցի, մինչև որ նամակդ կարդացի . շնորհակալություն:

Այստեղ ձմեռն սկսվել է, երկու օր է ձյուն է գալիս:

Ջերմագին սեղմելով իմ ձեռքը, մնամ

Քո Շուշանիկ